

## ԶԱՆԱԶԱՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### Ա.— ԿԻՒՐԻՆ ԿԱՄ ԿՈՒՌԻՒՆ

«Պատկերագարդ բնաշխարհիկ բառարան»ի մէջ

ԿԻՒՐԻՆ կամ ԿԻՒՌԻՒՆ.— Քաղաքս կը գտնուի Սեբաստիոյ կուսակալութեան ներքեւ եւ կը սլատկանի Կիլիկիոյ կաթողիկոսական վիճակին. Սեբաստիայէն 24 ժամ հեռու է, Նաչ-Քափա եւ Պայա-Քափա անուն շերանց մէջ լեռնային արեւմուտք ուղղահայեաց եւ երկայնակ ձորի մը մէջ օձաձեւ շինուած եւ պարտիզապատ է: Երջապատն կը տեւէ 2 ժամ, լայնութիւնը 1/2 մղոն է եւ երկայնութիւնը 4 մղոն: Քաղաքս բաժնուած է Շուղուլ, Էօրէն, Տափեր, Սմկնայ, Չերչի-կոք, Խոնաւ-թլուր, Սաղ, Քէթէն-չայրը, Խաս-պաղ, Չախ ձոր եւ ուրիշ քանի մը անոջան թաղերու:

Շուղուլ թաղը ունի լճակ մը՝ 8 կանգունի չափ խորութեամբ, զոր տեղացիք «ծով» կ'անուանեն: Ամառը, բնակիչներէն շատերը Կիրակի եւ տօնի օրեր կը լուացուին այս լճակին մէջ, եւ առհասարակ վարժ են լողալու՝ իրենց մանկական հասակէն սկսեալ: Օղն ու ջուրը շատ առողջարար են. բայց արեւու ելից եւ մաից ժամանակը, սովորականէն գրեթէ ժամ մը տարբեր է: Թաղիս բնակիչները արեւուն ճառագայթները քիչ կը վայելեն, որովհետեւ առաւօտները ուշ կը ծաղի եւ երեկոներն ալ կանուխ կը խոնարհի ի մուտս, եւ այս՝ իրեն լեռնային եզական դիրքին պատճառաւ: Քաղաքին բոլոր ջուրերը գրեթէ այս թաղէն կը բղխին: Ունի ստուերախիտ ծառեր եւ պարտէզներ՝ զորս տեղացիք Էփի (այգի) կ'անուանեն: Պաղողի յատուկ այգիներ չկան, միայն տանց պատուհաններու առջեւ որթերու փոքր ճիւղեր կը գտնուին, մասնաւոր շինուածոց վրայ տարածելով իրենց ողկոյցներն, որ միայն իբր ագոխ կը գործածուին: Տեղացիք խաղող կը բերեն Ալշար ըսուած տեղէն, որ երեք օրուան ճանապարհ հեռու է եւ կը գտնուի Ալպըստանի եւ Գերմանիկի մէջտեղ: Այդ խաղողը շատ պատուական եւ անուանի է քաղցրութեամբն ու նուրբ կեղեւովը: Քաղաքիս պարտէզները ամէն տեսակի կանաչեղէն կ'արտադրեն. կը մշակուին մասնաւորաբար ժիր ու գործօն իզական սեռի կողմանէ: Ամէն տուն ունի բաւական ընդարձակ պարտէզ, ուր կը բուսնին սոխ, սխտոր, կաղամբ, դդում, վարունգ, ստեպղին, շոգգամ, բանջար, լուբիա, եւայլն: Պարտէզներու մէջ կը գտնուին պտղատու ծառեր. գլխաւորաբար թուփի, խնձորի, տանձի, սալորի: Ծատ նշանաւոր է Թաղու կոչուած սալորը՝ երեք եւ աւելի տեսակներով. ասոր կեղեւը երբ հանուի ու չորցուի՝ շատ օգտակար է հիւանդի ախորժակին եւ բաւական սուղ է, քաշը 4 դահեկան կ'արժէ եւ երբեմն աւելի: Կանայք դադար չունին պտղոց ժամանակ. շարունակ բահ ու բրիչ ի

ձեռին, դարձան առաջին ամիսին սկսեալ մինչեւ աշնան վերջը, դորժ ունին պարտիզաց մէջ եւ ձմրան համար կը պատրաստեն ամէն տեսակի անուշեղէններ: Թուֆէ կը շինեն երկու տեսակ բէքմէզ՝ Կիւն-Պալի եւ Թուքի անուշեղէնով, եւ քանի մը տեսակ փերվերսէ սալորէ, ծիրանէ եւ խնձորէ: Բալի ջուրէն կը շինեն օշարակ մը, որ շատ տեղերէ կը գնեն: Ընդհանրապէս պարտէզներու մէջէն կ'անցնին կարկաշատն առուակներ՝ որոնցմով կ'ոռոգուին պարտէզները: Շուգուլ Թաղի բնակիչք գլխաւորաբար հայ են՝ 200 տուն, ունին փոքրիկ բայց բաւական ճաշակաւոր փայտեայ եկեղեցի մը եւ մօտը ծաղկոց մը: Ժողովուրդը մեծաւ մասամբ աղքատ է. երկրին դիրքը չի ներեր, որ առանց պանդխտութեան կարողանան հայթայթել իրենց ընտանեաց ապրուստը: Այս Թաղեցիք առեւտրական շուկայ չունին, շուկան Ժամ մը հեռու է, ուր կ'իջնեն քանի մը կարող անձինք իրենց առեւտուրին համար. իսկ մնացեալք շալի ուտայնանկութեամբ կը գրադին. չարաչար կ'աշխատին, բայց իրենց շահը ոչինչ է: Շալի դորժը բաւական կը սեպուի, եթէ արժէքով վաճառի. ամէն կողմ տարածուած լինելուն համար նախկին յարգը կորսուած է. ամենէն յաջողակ անձը՝ օրը հազիւ 5—6 դահեկան կը շահի: Հայերէն իբր 60 տուն բողոքական են եւ ունին փայտաշէն ժողովարաններ եւ մանչերու ու աղջիկներու վարժարան:

Իօրէն Թաղը մէկ կողմէն կից է վերոյիշեալ Թաղին եւ միւս կողմէն ալ անջատուած՝ 20 վայրկեանի չափ հեռու կը գտնուի: Գլխաւորաբար երկու մասի կը բաժնուի, Վերի եւ Վարի Իօրէն անուամբ: Թաղիս հայ բնակիչք 150 տունէ կը բաղկանան, որոնց 30-ը բողոքական են: Հայք ունին Ս. Գէորգ անուամբ փայտեայ փոքր ու ճաշակաւոր եկեղեցի մը, որուն բարեկարգութեան կը հսկեն ազգայիններէ ընտրեալ հոգաբարձուներ: Եկեղեցւոյն կից կայ վարժարան մը, որուն ի նպաստ ընկերութիւն մ'ալ կազմուած է: Թաղիս ազգայինք հիւրասէր, քաղցրաբարոյ եւ մարդասէր են, շատ կը սիրեն պանդխտները, իրենք պանդխտութեան վարժ ըլլալով: Օղն ու ջուրն ալ լաւ են: Բնակիչք քաջառողջ են, հիւանդութենէ զրեթէ ազատ: 1888-ի սովէն չարաչար տառապեցաւ ժողովուրդը:

Տափեր Թաղը Իօրէնէն քառորդ ժամու ճանապարհ հեռու է. այս Թաղեցիք գլխաւորաբար մահմետական են եւ գրեթէ անկարող են. իրենց օրապահիկն դառն աշխատութեամբ կը հայթայթեն. քաջակազմ եւ առոյգ են առհասարակ, կրթութենէ բոլորովին զուրկ: Ասոնց գլխաւոր գրաղումն է երկրագործութիւնը: Այս Թաղը միայն 50 տունէ կը բաղկանայ. Հայք այս Թաղիս մէջ ունին ոչ տուն եւ ոչ պարտէզ. միայն վերջին տարիներս երկու Հայեր հողեր գնած եւ վարձու տուած են: Թաղիս օղն անմասն է եւ ջուրն պատուական, մշտահոս առուակներ ջինջ ու վճիտ կը հոսին խոխոջելով խիտ առ խիտ ծառերու ստուերաց եւ կանաչադեղ մարգաց մէջէն:

Սմկնայ Թաղն Իօրէնէ 10 վայրկեանի չափ ճանապարհ հեռու է: Հայք ունին 20-է աւելի տուներ եւ կը պատկանին Իօրէն Թաղի եկեղեցւոյն: Հայոց մէջ նշանաւոր է Մովսէսախալեան գերդաստանն, որ քանի մը տուններու բաժնուած է, պարկեշտ, երկիւղած, հիւրասէր եւ քաղցրաբարոյ: Այս Թաղեցիք զուրկ չեն պարտէզներէ եւ կրնան իրենց առօրեայ պէտքը լեցնել:

Չերչիկոբ Թաղն համանուն կամուրջէ մը հինգ վայրկեան հեռու է: Աստ կան 20 տուն Հայոց եւ քանի մը տուն ալ կաթողիկէ Հայք: Տուները չըջապատեալ են բարձրաբերձ անբեր լեռներով: Այս փոքր Թաղի բնակիչք միացեալ կը համարուին Եաշ-Թեփիէ (Խոնաւ-բլուր) Թաղի, ուր կայ 40 տուն: Թա-

դիս հայերը շատ համակրելի բնութեամբ օժտեալ են. չափազանց հիւրասէր են, կը յարգեն ու կը մեծարեն պանդուխտները: Անուանի է Մակարեան դեր-դաստանն բազմանդամ եւ նիւթական վիճակով ալ բարերարդ: Այս թաղի ազ-գայինք տեսնելով որ մայր եկեղեցւոյ վարժարանը 20 վայրկեանի չափ ճա-նապարհ հեռու է իրենց թաղէն, հանդանակութեամբ ու նուիրատուութեամբ յատուկ վարժարան մը կառուցին եւ կ'աշխատին անոր բարեկարգութեան ու արգելնաւորութեան համար:

— Այս թաղէն միայն հինգ վայրկեանի ճանապարհ հեռու է Աշուր քաղն, որոյ բոլոր տարածութիւնը 10 վայրկեանի ճանապարհ է, եւ բնակիչք ամբողջ մահմետական՝ 50 տունի չափ են: Իւրաքանչիւր տուն ունի ընդարձակ պարտէզ եւ փոքր առուակ՝ ոռոգման եւ այլ պիտոյից համար. այրք մեծա-դոյն մասամբ պանդխտութեան մէջ լինելով, կանայք ընտանեկան պէտքերն հոգալէ զատ, առհասարակ մշակութեամբ ալ կը պարապին եւ վարժ են բահ եւ բրիչ գործածելու: Թաղիս տուներու դիմաց բարձրացած են անբեր ու ա-ւագուտ լեռներ: Աշուրի ստորին կողմէն կ'անցնի բաւական մեծ ու ընդարձակ դետ մը՝ Շուղուլ թաղէն սկսեալ: Այս դետը յաճախ յորդելով՝ կը վնասէ պարտիզաց եւ մարդազետնոց:

Սեւ-բլուր (Գարա-Թէփէ) թաղն Աշուրի ետեւի կողմը, արեւմտեան ճիշդ դիմացն է, եւ երկու թաղերը կը բաժնուին մեծ գետով մը: Թաղիս ե-տեւի կողմը բարձրացած են անբեր լեռինք, որ անասնոց համար հազիւ սակաւ մի ճարակ կրնան տալ: Այս թաղի բնակիչք մեծ նեղութիւն կը կրեն ջուրի կողմանէ: Հայք 300 տան չափ են, իսկ մահմետականք քանի մը տուն: Յա-տուկ եկեղեցի ու դպրոց չունենալով մայր եկեղեցին կ'երթան եւ իրենց որ-դիքն ալ նոյն եկեղեցւոյն վարժարանին մէջ կ'ուսանին, չունին նաեւ ուրոյն շուկայ, եւ քաղաքին շուկան քառորդ ժամու ճանապարհ հեռու է այս թաղէն: Սեւ բլուրի ազգայնոց գլխաւոր գերդաստաններն են Մարանեան, Թէրճանե-ան, Քիւրքճեան եւ Մուղամեան: Նշանաւոր է Մարանեան տոհմը եւ համայն շրջակայ քաղաքաց եւ Կիլիկիոյ բոլոր վիճակաց մէջ հանրածանօթ: Մարանե-ան Յարութիւն էֆէնտի, ուրիշ բարեգործութիւններէ զատ, իր ծախքով մայր եկեղեցւոյ շրջանակին մէջ համանուն վարժարան մը հաստատած է: Թաղիս մէջ կան նաեւ 20—30 տուն հայ բողոքական եւ ունին բաւական կանո-նաւոր երկսեռ վարժարան մը:

Սաղ քաղի ձեւն ճիշդ նման է աւազանի: Կը կարծուի թէ երբեմն բուն քաղաքն աստ էր, եւ Կիւրքն կոչուած է՝ թուրքերէն Կիւրին կամ Քիւրքն բա-ռով, որ աւազան կը նշանակէ, բայց հաւանական է որ Կորիւն բառին աղա-ւաղեալն լինի, որովհետեւ բնական ծերպերէ փորուած որջի նման բերդ մ'ունի եւ թուրք հին յիշատակութեան մէջ ին իօնիւ ըսած են քաղաքին, որ որջի առջեւ շինուած է, եւ Հայք Կորիւն անուանած են, երբ, որպէս կը կար-ծուի, հոս դաղթեր են Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի հետ: Սաղ թաղն այժմ բոլորովին քայքայեալ է: Տուներու աւերակ դէզադէզ քարերը տակաւին կը յիշեցնեն թէ ի հնումն բնակութիւն կար: Յետոյ՝ հետզհետէ շի-նուած են միւս թաղերը՝ գարնանային, ամառնային եւ աշնանային օդափո-խութեան համար, եւ Սաղ թաղի մէջ միայն ձմեռները կը բնակէին: Այս թա-ղին մէջ դեռ կան քանի մը ընտանիք թրքաց, որ գարնան սկիզբը կը տեղա-փոխուին միւս թաղերը, ուր յատուկ բնակարաններ ունին պարտէզներու մէջ: Հին ատեն բնակիչք աստ հաստատած են իրենց գերեզմանատեղին, բայց ոչ

պարիսպ կայ ոչ մասնաւոր շրջապատ մը. բնաւ որեւէ բոյս ու խոտ չի նըշմարուիր՝ տեղն անրեր ու աւազուտ ըլլալուն պատճառաւ:

Քաղաքիս մէջ կան 60 տունէ աւելի կաթողիկէ հայեր, որոնց թիւը գրեթէ միշտ նոյնը մնացած է ամուսնութեանց նուազման պատճառաւ: Ունին քարաշէն գեղեցիկ եկեղեցի մը, որոյ շրջանակին մէջ շինուած են վայելչածե սենեակներ՝ յողովրդասպետի եւ եկեղեցականաց բնակութեան համար: Կաթողիկէ հայք կը բնակին սովորաբար Սմկնայ կամըջի մօտ դէպի Շուռալ եւ Սաղ թաղի մէջ. Սմկնայ թաղի մէջ ալ ունին եկեղեցի մը. աստ է նաեւ իրենց վարժարանը: Քաղաքիս բնակչաց ապրուստի դիւաւոր միջոցն է հետեւեալը. վրանարնակ քուրդերը գարունէն մինչեւ աշուն դալով եւ քաղաքիս մօտակայ պտղեր եւ սննդարար բոյսերու եւ խոտերու առատ դաշտաց վրայ բնակութիւն հաստատելով կ'անցընեն շատ ժամանակ. ասոնք իրենց պէտքն կը հայթայթեն՝ ոչխարաց ասրն եւ լւղը ալով: Քաղաքիս մէջ ոստայնանկութիւնը յառաջանալով՝ այժմ գրեթէ Եւրոպիոյ հետ կը մրցի: Կը դործեն ամէն տեսակ ընտիր, տոկուն եւ գեղեցիկ նիւթեր գգեստի համար. վերջին ժամանակներս բնակիչք տրամադիր էին եւրոպական վաճառք չգործածել եւ տեղական կառավարութիւնն ալ կը քաջալերէր: Մինասեան եւ Արամեան ընկերութիւն մը հաստատուած է, որ հարիւրաւոր տեսակ բրդեայ ու բամբակեայ կերպասներ գործել կու տայ եւ Թուրքիոյ մէջ շատ տեղ հռչակուած է:

Սաղ թաղին մէջ է Հայոց մայր եկեղեցին, իբր 60 տարի առաջ շինուած, բոլորովին քարուկիր, բաւական ընդարձակ, երկդռուն եւ եռախորան: Կառավարութեան ասպարանքը կը գտնուի շուկային կից, որ կը պարունակէ բաւական ընդարձակ սենեակներ՝ Սեբաստիոյ ճարտար արհեստաւորաց ձեռք շինուած: Սենեկաց կից կը գտնուի բանտը: Քաղաքիս կառավարութեան պաշտօնեայք գրեթէ ամէնքն ալ Սեբաստացի են եւ ընտանեօք կը բնակին աստ: Կառավարութեան ասպարանքին դրան առջեւ փառաւոր մարդ մը կայ՝ փոքր տարածութեամբ սօսիի ընտիր ծառերով խիտ առ խիտ բոլորեալ: Այս մարդագետինը կը ծառայէ պաշտօնական հանդիսից եւ պաշտօնէից դրօսանաց՝ յատկապէս հսկող զինուորներ ունենալով: Մօտէն կը հոսի գետակ մը՝ որ ոչ ըմպելու եւ ոչ պիտոյից կը դործածուի: Շուկայի մէջ 200-ի չափ խանութ կայ. հացագործի երկու փոռ միայն կայ, որովհետեւ Կիւրինցիք իրենց հացը կը պատրաստեն իրենց տան մէջ, շատ ախորժահամ եւ ընտիր: Շուկային կից կը գտնուի պանդոկ մը՝ որ Թերճանեան Թերճան աղայի սեպհականութիւնն է, պանդոկի ձեռով Պետեքէն մը՝ որ կաթողիկէ Հայերէն Թաղէիան Յակոբ աղայի կը վերաբերի: Սրճարան բնաւ չկայ:

Քեթէն-չայքը թաղը շատ բնակիչ չունի. տուները շինուած են զառիվայրի վրայ, ունին ջուր եւ պարտէզներ իրենց պիտոյից համար. եկեղեցի եւ վարժարան չկայ եւ տեղոյս Հայք մայր եկեղեցւոյ կը պատկանին:

Խաս Պաղ թաղը, իր անուան համաձայն՝ ունի ընտիր ու գեղեցիկ պարտէզներ: Ընդարձակ թաղ մ'է, իւրաքանչիւր տուն ունի յատուկ պարտէզ, միւս թաղերու պարտէզներէ աւելի ընդարձակ, բազմաթիւ ծառերով եւ տեսակ տեսակ ընտիր ու համեղաճաշակ մրգեղէններով զարդարեալ, ունի առուակ մը եւ քանի մը աղբիւրներ: Թաղս կը բաղկանայ 200-ի չափ գրեթէ բոլորովին հայաբնակ տուներէ, սակայն յատուկ եկեղեցի չունին: Նշանաւոր գերդաստանն է Մ. Աւետիս աղայ Մ. Մինասեան եւ որդին Մ. Սարգիս էֆէնտի Մ. Մինասեան. ասոնք կը զբաղին շալի եւ այլ զանազան կերպասներու շինութեան գործով: Այս ձեռագործները ծանուցուած են եւ շատ տեղեր կը դոր-

ծածուխն : Նշանաւոր է այս կերպատներու սովորութիւնը , դժուարամաշու-  
թիւնը եւ անխարդախութիւնը :

Չախ-ձորը թաղը քաղաքիս բոլոր թաղերուն առաջինն է թէ բազմա-  
մարդութեան եւ թէ ընդարձակութեան կողմանէ : 400-ի չափ տուն կայ , 90-ը  
բողոքականաց : Ոմանք կ'անուանեն՝ Չաղացքի-ձոր՝ ձորերու մէջ քանի մը  
ջաղացք շինուած լինելուն պատճառաւ : Թաղս շինուած է բարձր լեռանց վրայ  
եւ ունի քանի մը մասնաւոր թաղեր , տաներն ընդհանրապէս շինուած են  
բարձր դիրքով , դրեթէ չկայ տափարակ վայր , ամէն տուն ընդարձակ պարտէզ  
ունի պտղատու ծառերով , դռնդռն ծաղիկներով եւ կարկաչահոս առուակ-  
ներով : Ունի մաքուր օդ եւ առատ ու քաղցրահամ ջուր : Հայոց եկեղեցին կը  
կոչուի Ս . Յակոբ :

Վեներաբլ , Ս . Ղազար , 1900 , պրակ Ա . :

Հ . Ս . ԷՓՐԻԿԵԱՆ

### Բ . — ԿԻՒՐԻՒՆ ԿԱՄ ԿԻՒՐԻՒՆ

Ունի աւան ընդ իշխանութեամբ Չափար Օղլուին , կառուցեալ առ ստո-  
բոտով լերին , անցանէ եւ առու ընդ մէջ նորա : Բնակիչքն տաճիկք , իսկ յաղ-  
դէս Հայոց են իբրեւ 400 կամ 500 տունք ըստ մեծի մասին պարապեալք ի վա-  
ճառակոնութեան մանաւանդ վշոյ եւ կտուռոյ , զորս բերեալ ի Դրապղունոյ ,  
եւ ի Կիւրին մաքրեալ եւ թափեալ սպիտակացուցանեն , եւ առաքեն յԱտանա  
եւ ի շրջակայ երկիրս : Գլխարկ նոցա սրանկիւն երկայն , այն է քիւլաի . խօսք  
նոցա եւ լնգու տարրեր յայլ քայրքառոյ հայոց եւ անսովոր մանաւանդ ըստ  
հնչման . բայց ընթերցասէր են յոյժ եւ հետամուտ յուսանել : Ունին ի քաղաքի  
եկեղեցի . եւ արտաքոյ քաղաքին մօտ ի Գանկալ մենաստան մեծաչէն , զոր  
յաւուրց անախ Սրբոյ Լուսաւորչին ասեն հիմնեալ : Ի սահմանս Կիւրինոյ լինի  
խնձոր մեծ եւ քաղցրահաշակ , ուստի սիրի ի վանաղան կողմանս :

Հ . ՂՈՒԿԱՍ ՎՐԳ . ԻՆՃԻՃԵԱՆ

Վեներաբլ . 1806 , «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի»

### Գ . — «ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ԲԱԲԵԼՈՆ ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ»

Ժամ մ'ալ յառաջ երթալով կը մտնես Մանճըլըք ըսուած հայաբնակ  
Գիւղը 50 տունով , որ ունի 200 բնակիչ , ամէնն ալ երկրագործ , դինավարժ եւ  
քաջասիրտ , բայց անկիրթ . մէկ վանք մը Ս . Թորոս անուն՝ ուր կը նստի վի-  
ճակին առաջնորդը . զպրոցն ու եկեղեցին ալ վանքին մէջ են : Գիւղին դիրքը  
լեռնային է , օդը բարեխառն , հիւսիսային արեւելեան հովերը կը փչեն :

Այս գիւղէն 9 ժամու չափ հեռի ապառաժուտ ու լեռնային ճամբաներէ  
յառաջ երթալով կը հասնիս Կիւրին գիւղաքաղաքն , որ Սվաղի նահանգին  
կցորդ է եւ ունի 20 գիւղ , որոնց բնակիչները տաճիկ են եւ երկրագործ :

Կիւրին գիւղաքաղաքն ունի 2000-ի չափ տուն , որոնց 1250-ը ուղղափառ  
Հայ , 90-ը հռոմէական եւ 10-ը բողոքական Հայոց է եւ 650 ալ տաճկաց :  
Բնակիչներն ընդհանրապէս աղքատիկ են՝ բայց հիւրասէր . 4 եկեղեցի Հայոց ,